ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1964 Общественные науки

ԸՆԿԵՐ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

Թանկագին բարեկա՛մ և ընկե՛ր:

ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՌՄ Մինիստրների սովետը Ձեր յոթանասնամյակի օրը ի սրտե և ջերմորեն շնորհավորում են Ձեզ՝ հավատարիմ լենինյանների, կոմունիստական պարտիայի ու սովետական պետության, միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ականավոր գործչի, իմպերիալիզմի դեմ, խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության և սոցիալիզմի համար խիզախ մարտընչողի:

Լինելով հերոսական բանվոր դասակարգի պանծալի զավակ, Դուք, Նիկիտա Սերգեևիչ, անցել եք հին Ռուսաստանի պրոլետարների աշխատանքի ու պայքարի դաժան դպրոցը: Ձեր գիտակցական կյանքն անխզելիորեն կապված է լենինյան պարտիայի, մեր մեծ ժողովրդի ռևոլյուցիոն գործունեության հետ: Քաղաքացիական պատերազմի տարիներին, քաղաքական աշխատանք կատարելով կարմիր բանակում, Դուք զենքը ձեռքներիդ կռվում էիք ինտերվենտների և սպիտակգվարդիական հակառևոլյուցիայի դեմ: Քաղաքացիական պատերազմն ավարտվելուց հետո Դուք Ձեր բոլոր ուժերը նվիրաբերում էիք սոցիալիստական շինարարությանը, երկար տարիներ գլխավորելով Ուկրաինական ՍՍՌ-ի և մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայի պարտիական կազմակերպությունները:

Հայրենական մեծ պատերազմի անհեղ տարիներին, Դուք, մեր պարտիայի մյուս գործիչների հետ միասին, անմիջականորեն ռազմաճակատներում ղեկավարում էիք սովետական ռազմիկների անձնվեր պայքարն ընդդեմ հիտլերյան զավթիչների: Լինելով գործող բանակի մի շարք ռազմաճակատների ռազմական խորհուրդների անդամ, Դուք ամենաակտիվ կերպով մասնակցում էիք ռազմական գլխավոր գործողությունների մշակմանն ու իրագործմանը, Վոլգոգրադի, Կուրսկի և Օրյոլի մոտ մղված պատմական ճակատամարտերին և այլ մարտերի:

Ավելի քան տասը տարի առաջ Դուք միահամուռ ընտրվեցիք Սովետական Միության կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար և 1958 թվականից գլխավորում եք սովետական կառավարությունը: Գտնվելով այդ կարևորագույն պաստերում, Դուք անխոնջ եռանդով եք կատարում Ձեր բացառիկ բարդ ու պատասխանատու պարտականությունները պարտիայի ու սովետական ժողովրդի հանդեպ:

Իր XX համագումարում մեր պարտիան Ձեր նախաձեռնությամբ վերցրեց անհատի պաշտամունքի ծանր հետևանքները վերացնելու, պարտիական ու պետական գործունեության լենինյան սկզբունքները վերականգնելու և զարգացնելու, կոլեկտիվ ղեկավարություն իրագործելու հաստատուն կուրս: Պարտիան այդ կուրսը կենսագործում էր հակապարտիական խմբի դեմ մղած կատաղի պայքարում, որը ջախջախվեց ու միահամուռ դատապարտվեց ամբողջ պարտիայի կողմից: Քաջ հայտնի է, թե ինչպիսի հսկայական դեր և ռևոլյուցիոներ-լենինյանի ինչպիսի խիզախություն ցուցաբերեցիք Դուք պետական ու պար-

տիական կյանքի լենինյան նորմաների հաղթանակի համար մղված պայքարում:

Մեր հայրենիքի՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջան բնակոխելը պարտիայից պահանջեց ստեղծագործաբար մշակել տեսական նոր պրոբլեմներ, գիտականորեն որոշել դեպի կոմունիզմ կատարվող առաջընթացի՝ ոչ ոքի կողմից չփորձված ուղիները: Կենտրոնական կոմիտեն Ձեր ղեկավարությամբ պետք է դրսևորեր իրադարձությունների խոր բմբռնում, ռեալիստական համարձակություն և լենինյան իմաստնություն՝ պարտիայի ճիշտ գլխավոր գիծ մշակելու համար: Մեծ Լենինի ստեղծած Սովետական Միության կոմունիստական պարտիան գտնվեց իր առջև կանգնած պատմական խնդիրների բարձրության վրա, հաջողությամբ լուծեց և լուծում է, արդիականության տեսական ու գաղափարական ամենաբարդ պրոբլեմներ, հենվելով Մարքսի-Էնգելսի-Լենինի մեծ ուսմունքի վրա: Ձեր անմիջական մասնակցությամբ պարտիան մշակեց և իր XXII համագումարում ընդունեց ՍՍՌՄ-ում կոմունիզմի կառուցման ծրագիրը, որ մի նոր էտապ է մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական զարգացման մեջ: Եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաները ՍՄԿՊ ծրագիրն անվանեցին արդի դարաշրջանի Կոմունիստական մանիֆեստ:

Կյանքը լիովին հաստատեց մեր պարտիայի տեսական դրույթների, նրա գլխավոր գծի, նրա պրակտիկ գործունեության ճշտությունը:

Անցած, հիրավի, մեծ տասնամյակի տարիներին մեր երկրում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, Լկոնոմիկայի ղեկավարման գործում կատարվեցին վիթխարի վերափոխումներ, որոնք ապահովեցին ժողովրդական տնտեսության զարգացման արագ տեմպերը: Պարտիան և ամբողջ սովետական ժողովուրդը գիտեն, թե Դուք, Նիկիտա Սերգեևիչ, ինչպիսի եռանդով, կազմակերպչական ինչպիսի մեծ տաղանդով ու գործիմացությամբ Եք զբաղվում տրնտեսական և կուլտուրական շինարարության, գիտության ու տեխնիկայի զարգացման հասունացած հարցերով, հասարակական հարաբերությունների կատարելագործումով, սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության հարցերով:

Ձեր ամբողջ բազմակողմանի գործունեության համար բնորոշ են սերտ կապը ժողովրդի հետ, անսպառ նախաձեռնությունն ու եռանդը, կյանքի պրոցեսների խոր վերլուծությունը, դեպի նվիրական նպատակը՝ կոմունիզմը ավելի ու ավելի արագ առաջ բերանալու ձգտումը, բնդսմին չհրապուրվելով ձեռք բերած հաջողություններով: Ձեր ամբողջ կյանքը, թանկագին Նիկիտա Սերգեևիչ, լենինյան պարտիային և սովետական ժողովրդին անձնվիրաբար ծառայելու փայլուն օրինակ է: Ձեր ղեկավարությամբ պարտիան ապահովեց մեր հայրենիքի տնտեսական, պաշտպանական և գաղափարական-քաղաքական հզորության շտեսնված ուժեղացում և խոշոր հաջողությունների հասավ ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում:

Անցած տասնամյակը համոզիչ կերպով ապացուցեց ՍՍՌՄ-ի լենինյան սկզբունքային ու նկուն խաղաղասիրական արտաքին քաղաքականության կենսական մեծ ուժը: Ինչպես երբեք, այժմ բարձր են Սովետական Միության միջազգային հեղինակությունը, նրա դերն արդիականության արմատական պրոբլեմների լուծման գործում: Նիկիտա Սերգեևիչ, բոլոր ժողովուրդները բարձր են գնահատում Ձեր աշխի ընկնող ավանդը խաղաղության գործի ամրապնդման,



գաղութատիրության ոչնչացման համար, բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին սոցիալական ու ազգային ճնշումից ազատագրելու համար մղվող պայքարում:

Կոմունիստական պարտիան հսկայական աշխատանք է կատարել և կատարում է՝ ամրապնդելու սոցիալիստական սիստեմի երկրների համագործակցությունը, համաշխարհային կոմունիստական շարժման միասնությունը մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հիման վրա, որոնք հետագա զարգացում ստացան եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների փաստաթղթերում 1957 թվականի Դեկլարացիայում և 1960 թվականի Հայտարարության մեջ: Հենվելով լենինյան սկզբունքների վրա, ՍՄԿՊ Կենտկոմը Ձեր ղեկավարությամբ, Նիկիտա Սերգեևիչ, անհաշտ պայքար է մղում ռևիզիոնիզմի, դոգմատիզմի, աղանդավորության, հեռատեսիզմի դեմ, հանուն մարքսիզմ-լենինիզմի անաղարտության, հանուն միջազգային կոմունիստական շարժման շարքերի ամրապնդման:

Լենինյան հերթին և արտաքին քաղաքականությունը, որ վարում են ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն և սովետական կառավարությունը Ձեր գլխավորությամբ, է՛լ ավելի է ամրապնդել մեր պարտիայի և ամբողջ սովետական հասարակության միաձույլ միասնությունը, մեր երկրի բոլոր ժողովուրդներին հասցրել է իրենց էկոնոմիկայի ու կուլտուրայի բարգավաճման, բոլոր ազգությունների աշխատավորներին համախմբել է կոմունիզմ կառուցողների միասնական եղբայրական կոլեկտիվի մեջ:

Մեր հայրենիքի և ամբողջ առաջադեմ մարդկության բարօրությանը նվիրված Ձեր գործունեությունը վաստակել է սովետական ժողովրդի, համայն աշխարհի աշխատավորների խոր երախտագիտությունը, հարգանքն ու սերը:

Թանկագին Նիկիտա Սերգեևի՛չ:

Ձեր պանծալի հոբելյանի օրը ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՌՄ Մինիստրների սովետը Ձեզ մաղթում են քաջառողջություն, առույգություն, երկար կյանք և նոր մեծագործություններ հանուն մեր մեծ հայրենիքի բարգավաճման, հանուն սոցիալիզմի և կոմունիզմի գործի հաղթանակի:

ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ	ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ	ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ

17 ապրիլի 1964 թվականի:

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԸՆԿԵՐ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոմունիստական հասարակարգի կառուցման, Սովետական Միության տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման, ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական բարեկամության զարգացման, լենինյան խաղաղասիրական արտաքին քաղաքականություն վարելու ասպարեզում կոմունիստական պարտիային ու սովետական պետությանը մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար և նշելով Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում հիտլերյան զավթիչների դեմ մղված պայքարում ունեցած բացառիկ ծառայությունները ընկեր Նիկիտա Սերգեևիչ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ, ծննդյան յոթանասնամյակի կապակցությամբ, շնորհել ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԻ կոչում, նրան հանձնելով ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆ և «ՈՍԿԵ ԱՍՏՂ» մեդալ:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Լ. ԲՐԵԺՆԵՎ
ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՁԵ

Մոսկվա, Կրեմլ, 16 ապրիլի 1964 թ.